ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 7

19/09/2024թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ԿՖԿՏՀ)» ՆԵՐԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «31» 03 2026թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից և «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ի. Գևորգյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող»), մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և 19/09/2024թ. կնքված N ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր»), 7.5 և 7"15 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին.

1.1.Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված 4-րդ Առաջադրանքի մասով ծառայությունների մատուցման համար ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Սահմանել, որ պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 01.12.2025թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

1"3 Պայմանագրի 3.3-րդ կետում «**Առաջադրանք 4**"Վճարումը առաքման ժամանակ՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 5%: Առաջադրանքի նախնական տևողությունը մինչև 110 օր՝ Առաջադրանք 3-ի ավարտից հետո» բառերը փոխարինել «**Առաջադրանք 4**"Վճարումը առաքման ժամանակ՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 5%: Առաջադրանքի մեկնարկը՝

Առաջադրանք 3-ի ավարտից հետո, իսկ վերջնաժամկետը՝ ԿՖԿՏՀ ծրագրային ապահովման ձեռքբերման մրցույթի արդյունքում պայմանագրի կնքման ամսաթիվը կամ մրցույթը չկայացած ճանաչելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 2025 թվականի հունվարի 30-ի № 29-Ա հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովի որոշման ընդունման օրը» բառերով:

2.Այլ պայմաններ

2.1. 19/09/2024թ. կնքված N «ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3» ծածկագրով պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են կազմված է հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Ֆինանսների նախարարություն ք. Երևան, Մ. Ադամյան 1 ՀՎՀՀ՝ 02629081 Հ/Հ 900011054260 ՖՆ գործառնական վարչություն ՖՆ գլխավոր քարտուղար _____Հ. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ	«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ ՀՎՀՀ՝ 02529689 Հ/Հ 1510000944344363 «Արարատբանկ» ԲԲԸ Տնօրեն՝ _____Ի. Գևորգյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1

19/09/2024թ. կնքված «ՀՀ ՖՆ ՀՄՄՇԲ-24/3» ծածկագրով պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով «31» 05 2026թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			մարտ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը		
1	72261150/2	«Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ)» ներդրման ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ			37,332,900	37,332,900	37,332,900	37,332,900	37,332,900	37,332,900	37,332,900	37,332,900	37,332,900	37,332,900

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011054260
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար

_____Հ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1,
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 02529689
Հ/Հ 1510000944344363
«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝

_____Ի. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.